Բոլոր խորհրդեան եպիսկոպոսաց բազմաց՝ մանաւանդ Գրիգորի Նազիանզացւոյ հան Թէոդոս հրաման լինել Ժողովոյ եպիսկոպոսացն արեւելից 'ի Կոստանդինուպօլիս։ Ժողովեցան 150 Հարք (381)։ Դամասոս Հռոմայ, Նեքտարիոս Կոստանդինուպօլսի, Տիմոթէոս Աղէքսանդրեայ, Մելիտոս Անտիոքայ, Կիւրղոս Երուսաղէմի, և Ներսէս Հայոց։ Առաջին գործ Ժողովոյն եղև նատուցանել զԳրիգոր Նազիանզացի յաթոռն Կոստանդինուպօլսի փոխանակ սուտ անուն Մաքսիմոսի։ Մելիտոս գահերէց Ժողովոյն յետ նատուցանելոյ զԳրիգոր իսկ և իսկ վախճանէր։ Հասին եպիսկոպոսունք Եգիպտացիք և Մակեդոնացիք, և 'ի չհաւանիլ նոցա ընդ ընտրութիւն Գրիգորի՝ հրաժարեցաւ նա յաթոռոյն խօսեալ ճառ յատենի։ ընտրեցաւ փոխանակ նորա Նեկտարիոս Տարսոնացի, որուն տուաւ նախ կնիք, ապա ձեռնադրութիւն և ապա գահերիցութիւն Ժողովոյն։ Քննեցան 'ի Ժողովի Հարց աղանդք Մակեդոնեանց, որոց ծնող և սկզբնահայր եկաց Մակեդոն հայհոյիչ, եպիսկոպոս Կոստանդինուպօլսեայ։ Սա բաղադրէր թէ Հոգին Սուրբ ոչ է հաւասարեալ Աստուած և ոչ երկրպագելի և փառաւորեալ ընդ Հօր և ընդ Որդւոյ, այլ օտար յԱստուծոյ բնութենէն և ստացական և պաշտօնեայ։ ազգումն ինչ և ոչ էութիւն անձնաւոր։ վասն որոյ կոչեցան ինքն և հետեւողք իւր հոգեմարտ։ յետ այնորիկ քննեցան և այլ աղանդք եւ ամենեքեան հերքեցան 'ի Կաթուղիկէ Եկեղեցւոյ նզովիւք եւ կարգեցին հարք Ժողովոյն եօթն կանոնս 'ի հաստատութիւն Նիկիական դաւանութեան և 'ի հերքումն հերետիկոսաց։ Իսկ յաղագս պատուոյ և իշխանութեան եպիսկոպոսաց իւրաքանչիւր աթոռոց։ Տես 'ի Պարտ։ Տիեզ։ Ժողովոյ։ 132։

Ի կատարել գործոյն՝ սիրով և մեծարանօք արձակեալ հարց Ժողովոյն 'ի Մեծէն Թէոդոսէ՝ չոգան 'ի դաւառս և յեկեղեցիս իւրեանց, ընդ որս և Կիւրեղ յաթոռն իւր յԵրուսաղէմ։ ուր սկսաւ յայնմհետէ յանդգնարարու վարել ըստ տեսչութիւն հօտին իւրոյ այլ եւս ամս քանի մի, և ապա հանգեաւ խաղաղութեամբ 'ի Քրիստոս ի արդեամբք (386։ Մարտ 18)։ Թողեալ գանձ եկեղեցւոյ զդիրս ոսկեմիտ վարդապետութեան իւրոյ, որ ասի՝ Կատեխիզիս։ կացեալ յաթոռն եպիսկոպոսութեան զամս 35 եւ